«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԶԱԼԻՍՏ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1. «Տարվա լավագույն ֆուտզալիստ» անվանակարգում քվեարկությանը կարող են մասնակցել

ՁԼՄ-ների ներկայացուցիչները և ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի ակումբները

2. «Տարվա լավագույն ֆուտզալիստ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային հավաքականում, ինչպես նաև իրենց ակումբներում, այդ թվում՝ արտերկրում, առավել աչքի ընկած ֆուտզալիստները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖ-ի կողմից:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտզալիստների ցուցակը, ՈՐՈՆՑԻՑ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ ՄԻԱՅՆ ՄԵԿԻՆ

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը:

4. «Տարվա լավագույն ֆուտզալիստ» մրցանակին կարժանանա ամենաշատ ձայն ստացած խաղացողը: